№ 149 Օգոստոսի 27 (Սեպտեմբերի 8) 1880 Օգոստոսի 27 (Սեպտեմբերի 8) № 149

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք գիտում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Մայի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն։ «Слово» ամսագրի յօդուածը։ Նամակ Շամախուց։ Նամակ Ամարաքանից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։— Արտաքին տեսութիւն։ Հայաստան։— «Մշակ»-ի հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Նամակ Ակէ քաղաքապետից։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«Մշակի» խմբագրութիւնը խնդրում է այն բաժանորդներին, որոնք այս տարի դեռ չեն վճարել խմբագրութեանը իրանց բաժանորդագինը, շտապով հաղցնել մեզ իրանց վրա մնացած ապասիկ փողերը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«СЛОВО» ԱՄՍԱԳՐԻ ՅՕԴՈՒԱԾԸ

Ներկայ համարի ներքին լուրերի մէջ մենք ուշադրութիւն ենք դարձնում ընթերցողին «Слово» ամսագրի յունիս ամսի տետրակի մէջ տպված մի յօդուածի վրա, որի նիւթն է այն կրօնական շարժումը, որ նշմարվում է այժմ հարաւային Ռուսաստանում։

Ամբողջ գիւղեր հարաւային Ռուսաստանի մէջ սկսեցին ընդունել շտունդիզմ ասված դաւանութիւնը, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ բողոքականութիւն։ Աղանդաւորները իրանք իրանց անուանում են ռուս-ատեստանականներ։

Այդ աղանդը նախ սկսեց տարածվել հարաւային Ռուսաստանի երկիրներում գերմանացի քարոզիչների ջանքերով, յետոյ նրանց տեղը հանդէս գուրս եկան իրանք ռուս քարոզիչները։

Աղանդի մէջ ընդունվում են միմիայն գրագէտ մարդիկ, և նա որ գրագէտ չէ, պէտք է նախ և առաջ գրել կարդալ սորվի։ Քարոզիչները տարածեցին ամբողջ Փոքր-Ռուսիայում աւետարանը ռուսաց աշխարհաբար լեզուով և ամբոխը սկսել է մեծ եռանդով ուսումնասիրել իրան հասկանալի լեզուով Աստուծու խօսքը։

Շատ գիւղերում ռուս ռամիկը, ինչպէս պատմում է հեղինակը, դուրս է բերում իր խրթին թիւ սուրբերի պատկերները, ասելով որ միայն Աստուծուն պէտք է աղօթել և ոչ թէ պատկերներին։

Յօդուածագիրը բերում է իր յօդուածի մէջ հետաքրքիր զօկումենտներ, ինչպէս օրինակ ռուսաց հոգևորականների նամակներ, քահանաների իրանց հոգևոր իշխանութեանը ներկայացրած գեկուցումներ։ Այդ տեսակ գեկուցումներից մէնը, մնանանդ, հետաքրքիր է։ Քահանան գրում է մօտաւորապէս հետևեալը։ «Մենք մեր անընդունակութեամբ ժողովրդի մտաւոր և բարոյական կեանքի վրա ազդելու, առիթ տուեցինք ինքներս նոր աղանդի տարածման աջողութեանը։ Մենք անչափ մեծ նշանակութիւն տուեցինք եկեղեցու լոկ արարողական կողմին, առանց ժողովրդին կենդանի լեզուով Աստուծու խօսքը քարոզելու, և այդպիսով ինքներս ազատ ասպարէզ պատրաստեցինք մի նոր դաւանութեան ամբոխի մէջ զարգանալուն։»

Յօդուածագիրը աւելացնում է այդ միտքը շատ մօտ է ճշմարտութեանը։

Յօդուածը դեռ վերջացրած չէ։ Կը սպասենք նրա շարունակելուն «Слово» ամսագրի հետեւեալ տետրակում։

Հեղինակը աւելացնում է որ աւետարանական շարժումը նշմարելի է ոչ թէ միայն հարաւային Ռուսաստանում, բայց և Ս. Պետերբուրգում ու Մոսկվայում ըսկսում է հետզհետէ յայտնվել նոյն շարժումը։

Ահա յօդուածի հեղինակի խօսքերը բառ առ բառ։ «Ռուսաստան կրօնին, երևում է, վիճակված է այժմ ենթարկվել նոյն ռեֆորմացիայի ազդեցութեանը, որին ենթարկվեցաւ անցեալ դարերում կաթոլիկութիւնը։»

Մենք բաւականացանք միայն յօդուածի միտքը պատմելով, առանց մեզանից որ և է դատողութիւն անելու։ «Слово» ամսագրի յիշեալ յօդուածի մասին։

Գ. Ա.

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

16 յուլիսի

«Մեղուի» 50 համարի մէջ կարդացինք մեր Շամախու առաջնորդ Թադէոս եպիսկոպոսի վրա մի քանի զոլամանական տեղեկութիւններ նրա գործունէութեան և բարեկարգ կառավարման վերաբերմամբ։ Ընթերցողը խաբված կը լինէ, եթէ այն արժանաւորութիւնները սեպականացնէ սրբազանին, մինչդեռ նա իր կառավարման զեկը բոլորովին յանձնած է իր գերիմաստ վարդապետին։ Ամէն ժամանակ, երբ ներկայացնում են սրբազանին զանգատաւորներ, նա առանց մի բառ արտասանելու, լուռ ու մունջ նայում է հանձարեղ վարդապետի երեսին, և վերջինս ընթացք է տալիս գործին։ Շամախու քաղաքում սորա առաջնորդութեան ժամանակ, այն, կատարվել են և սկսվել մի քանի նշանաւոր գործեր, այն է տեղիս մայր եկեղեցու վերանորոգութիւնը, օրիորդաց ուսումնարանի և Պաղտիի վանքի շինութիւնը (վերջին երկուքը դեռ նոր են սկսված)։ Սրբազանը բաղդաւոր է միայն նրանով, որ նրա ժամանակում կատարվում են այդ ազգային ձեռնարկութիւնքը, իսկ մենք, որ լոկ ականատես ենք և վկայ գործողների և աշխատողների գործունէութեանը, նոցա առատ նուիրատուութեանը, չենք կար

ում, որ վստահաբար սեպհականացնել իրան ուրիշների վաստակը։ Նախ, մայր եկեղեցու վերանորոգութեան հոգսը պատկանում է գլխաւորապէս մեր վեհափառ Հայրապետին, որ իր հայրական հոգատարութեամբ ժողովել առուց վիճակներից յօգուտ այդ վերանորոգութեան մի նշանաւոր գումար, երկրորդ՝ մեր նախկին առաջնորդ գերապատիւ Անդրէաս արքեպիսկոպոսին, որ իբրև արիւն և սրտացաւ հովիւ, իր ժամանակին այս մասին հարկաւոր բոլոր կարգադրութիւնները արաւ, այլ ևս չենք խօսում այն պարոնների մասին, որոնք իրանց ջերմեռանդութեամբ օգնեցին գործին։ Երրորդ՝ օրիորդաց ուսումնարանի շինութիւնը (եթէ արդարև իրագործվի) պարտական է իր գոյութեամբ Պաւել Շամիրիչ Մելիք-Թէգլարեանցին և տեղիս գաւառապետ Պ. Սատարեվին, որոնք համակրելով այս օգտաւէտ ձեռնարկութեանը, աշխատեցին և սեպհականացրին ուզեչան խրատներ։ (Մեր ժողովրդը սովորաբար մեծ պասին և սաստիկ ատատաւանդաստ դառնում։) Ահա սկսում է իր ցնչական քարոզը Գ.... քահանան։ Բայց փոխանակ մի հոգեչատ քարոզի, փոխանակ բարոյական խնամատարով լի խրատների, տեսնէք թէ ինչ մի մէջեղադրական ցնդաբանութիւն է քարոզում նա ժողովրդին։ «Աստուածաշունչ ժողովուրդ։ Ցէրն մեր Քրիստոս մեր ծովացեալ մեղացը յոյժ բարկացել ա, թիմանը լրցրել ա, թուրը սրել ա, երկուսն էր մեր գլխի վրա հազիր բռնել ա, որ մեզ պատուհասի։ Հմի մեծ պաս ա, ապաչխարելու մեղքերը քաւելու լաւ ժամանակն ա, (երևում է մնացեալ ժամանակը մեղքերը պատրաստելու ժամանակ է։) մեղքերդ քաւեցէք, թէ վերջներդ չա՛ փիս կը լինի....» և այսպիսի մի նախաբերեդեղան զարդայնան ա՛ է և մինչև բուկը նախապատրաստութիւնների մէջ թաղված անձնասրութիւն կարդանում է արժանաւոր քահանայական պաշտօնի, յանդգնում է լինել հովիւ և քարոզիչ ժողովրդան։ և պարիսի քահանաների թիւը մեր քաղաքում այնքան չատ է, որ միայն զարմանք կարող է պատճառել ժողովրդին որիշ ոչինչ։ Լրագրութիւնը և գրողներն էլ ձանձրացան այսպիսի քահանաների գործունէութիւնը հարատեւելով, բայց իրանք չը ձանձրացան իրանց պատուական ցնդաբանութեամբ ժողովրդին ձանձրացնելով։ Հաստատութեանը, այսպիսի պատուական հովիւների հիրաններից ազատելու համար, վստահանում եմ խորհուրդ տալ բարձրագոյն հոգևոր իշխանութեանը, որ այս ձեռնադրված անարժան

մանի և այս կամ այն կուսակցութեան ենթակայ թղթակիցներ, հանդգնամտ չազակրատներ, վերջին կարգի նիթամաչկս անապատոնիներ և առաջին կարգի բիմամաներ, որոնք գործել են հասարակական գործոներ, մի անենան բացատութեամբ սարկաստի թագապետներ, քաղաքը մի ժամի մեջ քիչ խաղալիք և հարատաարութեան առարկայ գործեցնողներ,—արի Ակէ քաղաքապետ։ Ահա հասարվում է հասարակութիւնը ընարդութեան։ ընտրում է մի մարդ, ձգում է հասարակական այս կամ այն պաշտօնը, իբրև ծանր բեռ իր ընտրածի վրա, պապում է բուկը և ասնուհետև թիքը հեռանում է, թող նա ինչպես ուզում է վարէ իր պաշտօնը, էլ հասարակութեան փոյթը չէ։ Ահա մի հասարակ գրագիր, որ երկար տարիներով ստանում է 400—500 տան հարկը և որպես ինքնիշխան հարկատան ձգում է իր գրպանը, փոխանակ հասցնելու քաղաքային գանձարանին, և այսպէս չատ հազարներ հասարակութեան ուտում է ու մարսում, մի թաս էլ ջուր վրէն խմում և այսօր ազատ, անպատիժ մեն է գալիս, իսկ հասարակութեան փոյթը չէ։ Ահա չորդորի և մի բաղդախնդիր օտարական ամենայն ճարպկութեամբ օգտվելով մի դիւրահաւատ և անքննադատ ժողովրդի բնաւորութիւնից, գտատրկում է ու գատարկում անդադար նրա գրպանը, և յետոյ մի թեքնահատութեան ժպիտ երեսին, ասում է ինքն իրան՝ «ուրեր, ինչպիսի գիւրութեամբ թոյլ են տալի իրանց փեսաները։» Ահա մի մարդ, որ չունի ոչնչոյր պարտաճանաչութեան, որ զուրկ է.... «փմտա, փմտա...» ընդհանուն է խօսք ընթերցող, «փատով խօսիր, ես ոչինչ չեմ հասկանում քո այդ մթին ակնարկութիւններից։»

—Այս բոպէին, համոյնչ փատաւոր, ընթերցող։ Երբ հրատարակվեցաւ Երևանում «Պսակ» չարթաթերթը, տեղոյս երիտասարդներից մի քանիսը ուղղեցին խմբագրին հետևեալ նամակը։ «Յարգելիդ խմբագիր, վաղված գրականան հանդով, խնամարեալ ինդրում ենք, որ մեր ուղարկած բոլոր յօդուածները բարեհաճէք տպագրել ձեր անաչառ լրագրի համարներում։ Ի դէպ է այստեղ նոյնպէս ձեզ հաւատացնել այնպէս՝ թէ մենք չատ ու չատ կարող ենք նպաստել ձեր լրագրի յառաջադիմութեանը։ Հաւատացէք, որ մեր աղդաբակրով գրուածքներով ձեր լրագրի հանալը աչխարհի մէկ ծայրից մինչև միւս ծայրը կը հասցնենք և այն, և այն խմբագիրը գանվիմբարդ զէմ է դիմում այդ թղթակիցներին... «ոհ, մեծաւ ուրախութեամբ, բեռ համար մեծ պատիւ է ձեզ նման թղթակիցներ ունենալ։ Գրեցէք, գրեցէք, ես ձեր բոլոր գրուածքները կը տպագրեմ իմ լրագրի մէջ։ Թէկուզ կոլով, կոլով բերէք, գարձեալ տեղ կը գտնէ այնտեղ։ Միայն գլխաւորապես հարկաւոր է ձեզ մի բան աչքի առաջ ունենալ. յօդուած գրելիս չը մոռանաք միշտ Բէգ-Նազարի պատմին զլուխ, իսմ գիտէք ես նրան թշնամի եմ։»

Լմի փասատ։

Մեծ պաս էր։ Ցեղոյս «ոչին չըաանաթ» անուանված արուարձանի եկեղեցին լցված էր ժողովրդի խուռն բազմութեամբ, որ եկել էր լսելու հոգեչատ խրատներ։ (Մեր ժողովրդը սովորաբար մեծ պասին և սաստիկ ատատաւանդաստ դառնում։) Ահա սկսում է իր հոգեչատ քարոզը Գ.... քահանան։ Բայց փոխանակ մի հոգեչատ քարոզի, փոխանակ բարոյական խնամատարով լի խրատների, տեսնէք թէ ինչ մի մէջեղադրական ցնդաբանութիւն է քարոզում նա ժողովրդին։ «Աստուածաշունչ ժողովուրդ։ Ցէրն մեր Քրիստոս մեր ծովացեալ մեղացը յոյժ բարկացել ա, թիմանը լրցրել ա, թուրը սրել ա, երկուսն էր մեր գլխի վրա հազիր բռնել ա, որ մեզ պատուհասի։ Հմի մեծ պաս ա, ապաչխարելու մեղքերը քաւելու լաւ ժամանակն ա, (երևում է մնացեալ ժամանակը մեղքերը պատրաստելու ժամանակ է։) մեղքերդ քաւեցէք, թէ վերջներդ չա՛ փիս կը լինի....» և այսպիսի մի նախաբերեդեղան զարդայնան ա՛է և մինչև բուկը նախապատրաստութիւնների մէջ թաղված անձնասրութիւն կարդանում է արժանաւոր քահանայական պաշտօնի, յանդգնում է լինել հովիւ և քարոզիչ ժողովրդան։ և պարիսի քահանաների թիւը մեր քաղաքում այնքան չատ է, որ միայն զարմանք կարող է պատճառել ժողովրդին որիշ ոչինչ։ Լրագրութիւնը և գրողներն էլ ձանձրացան այսպիսի քահանաների գործունէութիւնը հարատեւելով, բայց իրանք չը ձանձրացան իրանց պատուական ցնդաբանութեամբ ժողովրդին ձանձրացնելով։ Հաստատութեանը, այսպիսի պատուական հովիւների հիրաններից ազատելու համար, վստահանում եմ խորհուրդ տալ բարձրագոյն հոգևոր իշխանութեանը, որ այս ձեռնադրված անարժան